

PLEASE READ CAREFULLY



STATE OF CALIFORNIA-  
HEALTH AND HUMAN SERVICES AGENCY  
CALIFORNIA DEPARTMENT OF SOCIAL SERVICES  
ADULT PROGRAMS DIVISION

# Կարևոր տեղեկություններ Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services, IHSS) ստացողի համար

Նահանգային օրենքում վերջերս տեղի ունեցած փոփոխությունն ազդում է IHSS ստացողների ու մատակարարողների վրա: (Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մասեր 12300.4, 12300.41 և 12301.1)

**Ստացողի հաստատված ժամերի թույլտվությունը չի փոխվելու, ու դուք շարունակելու եք ստանալ ամսական հաստատված ծառայության նույն ժամերի քանակը, որոնք հիմա եք ստանում:** Դուք կշարունակեք աշխատել ձեր մատակարարող(ներ)ի հետ՝ համոզվելու համար, որ ստանում եք ձեզ անհրաժեշտ բոլոր ծառայությունները ողջ ամսվա ընթացքում:

**Երբ են ուժի մեջ մտնում փոփոխությունները.** փոփոխություններն ուժի մեջ են մտնում **2016 թ. փետրվարի 1-ից:**

## **Ի՞նչ է փոխվել**

Այս օրենքն ասում է, որ IHSS մատակարարողները վճարվելու են արտաժամյա աշխատանքի համար՝ որոշ սահմանափակումներով, ու վճարվելու են ստացողից դեպի ստացող իրենց ճամփորդության ժամանակի համար՝ որոշ սահմանափակումներով:

### **1. Հաստատված ժամերի շաբաթական հաշվարկում**

Ձեր ներկա ընդհանուր ամսական հաստատված ժամերն այժմ բաժանվելու են 4-ի՝ որոշելու համար ձեր առավելագույն շաբաթական ժամերը: Առավելագույն շաբաթական ժամաքանակը մի ուղեցույց է, որը ձեզ տեղեկացնում է ժամերի առավելագույն քանակի մասին, որը ձեր մատակարարող(ներ)ը կարող է աշխատել ձեզ համար աշխատանքային շաբաթվա ընթացքում:

*Օրինակ. դուք ստանում եք ամսական հաստատված 100 ժամ: Համակարգը կբաժանի 100 ժամը 4-ի՝ որոշելու համար առավելագույն շաբաթական ժամաքանակը՝ 25 ժամ:*

Սակայն, քանի որ ամիսների մեծ մասը 4 շաբաթից մի քիչ ավել է, դուք պետք է համագործակցեք ձեր մատակարարող(ներ)ի հետ, որպեսզի բաշխեք ձեր ժամերն ամբողջ ամսվա ընթացքում՝ համոզվելու համար, որ դուք ծառայության բոլոր ժամերն ունեք ամսվա համար:

*Դեկտեմբեր ամիսն ունի 31 օր: Դուք ստանում եք ամսական հաստատված 100 ժամ: Առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 25 ժամ (100 ամսական հաստատված ժամը՝ բաժանված 4.0-ի): Սակայն քանի որ դեկտեմբերն իրականում 4 ու կես շաբաթ է տևում, դուք պետք է որոշեք, թե որքան ժամեր եք ցանկանում պահել յուրաքանչյուր շաբաթից, որպեսզի բավական ժամեր ունենաք ամսվա վերջին մի քանի օրերի համար: Դուք կարող եք, օրինակ, խնդրել, որ ձեր մատակարարողն աշխատի շաբաթական 22 ժամ առաջին չորս շաբաթվա ընթացքում, ինչի հետևանքով ձեզ կմնա 12 հաստատված ծառայության ժամ ամսվա վերջին օրերի համար (22 ժամ բազմապատկած 4-ի՝ հավասար է 88 ժամ. 88 ժամին գումարած 12 ժամ՝ հավասար է 100 ժամ):*

Այնուամենայնիվ, դուք կարող եք փոփոխել ձեր առավելագույն շաբաթական ժամերը որոշ դեպքերում: Տեսեք **ԺԱՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ** հատվածը:

## **2. Մատակարարողի աշխատանքային շաբաթվա սահմանափակումը**

Մատակարարողներն այժմ սահմանափակում ունեն, թե քանի ժամ են աշխատում մեկ աշխատանքային շաբաթում: Սա կախված է այն բանից, թե քանի ստացողների համար են նրանք աշխատում:

Եթե դուք ունեք միայն մեկ մատակարարող, և նա ուրիշ ստացողի համար չի աշխատում, ապա առավելագույն ժամաքանակը, որը նա կարող է հայցել աշխատանքային շաբաթվա համար, կազմում է **ձեր առավելագույն շաբաթական ժամերը:**

Եթե ձեր մատակարարողն աշխատում է մեկ այլ ստացողի համար, ապա աշխատանքային շաբաթում նրա հայցված առավելագույն ժամաքանակը միասնաբար բոլոր ստացողների համար նրա աշխատած ժամանակի համար պետք է կազմի 66 ժամ: **Դուք պետք է ձեր մատակարարողի համար ժամանակացույց կազմեք՝ որոշելու համար, թե քանի ժամ է նա աշխատելու ձեզ համար, որպեսզի համոզվեք, որ նա չի աշխատում շաբաթական 66 ժամից ավել: 2016 թ. փետրվարի սկզբին դուք կստանաք **Ծանուցում ստացողին առավելագույն շաբաթական ժամերի վերաբերյալ (SOC 2271A)**, որը տեղեկություններ կպարունակի ձեր առավելագույն շաբաթական ժամերի մասին, որպեսզի դուք օգտվեք դրանից ձեր մատակարարող(ներ)ի համար աշխատանքային գրաֆիկ ստեղծելիս: Աշխատանքային գրաֆիկը կազմելու համար ձեր մատակարարողը պետք է ձեզ ասի, թե նա որքան ժամ է կարող աշխատել ձեզ համար յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ընթացքում: Եթե ձեր մատակարարողը չի կարող աշխատել ձեր բոլոր հաստատված ժամերը, ապա դուք պետք է լրացուցիչ մատակարարող(ներ) գտնեք: **Եթե դուք օգնության կարիք ունեք մեկ այլ մատակարարող(ներ) գտնելու ու աշխատանքի ընդունելու հարցում, դուք կարող եք զանգահարել ձեր վարչաշրջանի IHSS Հանրային իշխանություն՝ մատակարարողների տեղեկատու ստանալու համար, կամ ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ:****

### **Վճարում արտաժամյա աշխատանքի համար**

**Ձեր IHSS մատակարարողը վճարվելու է արտաժամյա վճարման դրույքաչափով, երբ նա աշխատում է ավելի քանի 40 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:** Արտաժամյա վճարման դրույքաչափը սովորական վճարման դրույքաչափի մեկ ու կեսն է:

Աշխատանքային շաբաթը սկսում է կեսգիշերից (12:00 a.m.) կիրակի օրն ու ավարտվում է մինչև կեսգիշերը (11:59 p.m.) հաջորդ շաբաթ օրը:

### **Վճարում ճամփորդության ժամանակի համար**

**Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ IHSS մատակարարողները, որոնք աշխատում են մեկից ավել ստացողների համար տարբեր վայրերում նույն օրը, պետք է վճարվեն ճամփորդության ժամանակի համար: Մատակարարողը պետք է լրացնի և ստորագրի ճամփորդության համաձայնագիր, որն ասում է, որ նա չի կարող ճամփորդել շաբաթական յոթ ժամից ավել:**

Նրանք կվճարվեն այն ժամանակի համար, որը հարկավոր է ծառայությունների առաջին ստացողից ծառայությունների երկրորդ ստացողին հասնելու համար՝ ընդհանուր առմամբ մինչև շաբաթական յոթ ժամ: Մատակարարողները կգրանցեն իրենց ճամփորդության ժամանակը ճամփորդության հայցի ձևում:

**Մատակարարողի ճամփորդության ժամանակը չի հաշվարկվում որպես առավելագույն շաբաթական 66 ժամվա մաս, և չի հանվում ստացողի ամսական հաստատված ժամերից:**

**Վարչաշրջանների միջև ճամփորդության ժամանակի համար վճարում**

Այն մատակարարողների համար, որոնք ճամփորդում են մեկ վարչաշրջանում գտնվող ստացողից դեպի մեկ այլ վարչաշրջանում գտնվող ստացողը, մատակարարողները պետք է իրենց ճամփորդության հայցի ձևում նշեն, թե որ ստացողի մոտ են գնում: Վճարման դրույքաչափը ճամփորդության համար որոշվում է մատակարարողի վերջնակետ վարչաշրջանի հիման վրա:

**ԺԱՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ձեր մատակարարողին ավել ժամեր աշխատելու թույլտվություն տալը**

Երբեմն ձեզ կարող է անհրաժեշտ լինել, որ ձեր մատակարարողն աշխատի ձեր շաբաթական առավելագույն ժամերից ավել: Դուք պետք է վարչաշրջանից հավանություն խնդրեք ձեր շաբաթական առավելագույն ժամերի փոփոխության համար, միայն եթե փոփոխության պատճառով ձեր մատակարարողն աշխատելու է:

- Ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան նա սովորաբար աշխատում է.

*Օրինակ. դուք ունեք ամսական հաստատված 180 ժամ: Ձեր նորմալ շաբաթական ժամերը կազմում են 45 ժամ մեկ աշխատանքային շաբաթում (180 ժամ՝ բաժանված 4-ի): Սակայն այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում ձեզ հարկավոր է, որ նա աշխատի 55 ժամ: Դուք պլանավորում եք նվազեցնել նրա աշխատանքային ժամերը 10 ժամով հաջորդ շաբաթ, որպեսզի նա աշխատի միայն 35 ժամ այդ շաբաթ:*

*Այս փոփոխության պատճառով ձեր մատակարարողն աշխատելու է 15 արտաժամյա ժամ երկու շաբաթվա ժամանակահատվածում՝ նորմալ 10 արտաժամյա ժամվա փոխարեն, որոնք նա սովորաբար կաշխատեր: Զանի որ այս փոփոխության պատճառով ձեր մատակարարողն աշխատելու է լրացուցիչ հինգ արտաժամյա ժամ մեկ ամսում, դուք պետք է վարչաշրջանից հավանություն ստանաք ձեր հաստատված աշխատանքային շաբաթվա այս փոփոխության համար:*

- 40 ժամից ավել ձեզ համար մեկ աշխատանքային շաբաթում, եթե ձեր առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ մեկ աշխատանքային շաբաթում:

*Օրինակ. դուք ունեք ամսական հաստատված 160 ժամ: Բաժանելով 160 ժամը 4-ի՝ որոշվում է, որ ձեր մատակարարողը սովորաբար աշխատում է 40 ժամ աշխատանքային շաբաթում: Սակայն այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում ձեզ հարկավոր է, որ նա աշխատի 42 ժամ:*

*Զանի որ այս փոփոխության պատճառով ձեր մատակարարողն աշխատելու է 40 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում, երբ դուք ունեք հաստատված 40 կամ ավելի քիչ ժամեր, դուք պետք է վարչաշրջանից հավանություն ստանաք ձեր հաստատված աշխատանքային շաբաթվա այս փոփոխության համար:*

**Նկատի առեք, որ.**

- Դուք **երբեք** չեք կարող թույլատրել ձեր մատակարարողին աշխատել ձեր ամսական հաստատված ծառայություն ժամերից ավել: Հետևաբար, երբ դուք թույլ եք տալիս ձեր մատակարարողին աշխատել լրացուցիչ ժամեր մեկ շաբաթում, դուք պետք է ասեք մատակարարողին, որ նա պակաս ժամեր աշխատի ամսվա մյուս շաբաթվա(ների) ընթացքում:
- Եթե ձեր մատակարարողն աշխատում է այլ ստացող(ներ)ի համար, նրա շաբաթական ժամերը **չեն կարող** կազմել **66 ժամից ավել**: Եթե ձեզ հարկավոր է, որ ձեր մատակարարողն աշխատի ավել ժամեր աշխատանքային շաբաթում, իսկ նա չի կարող, քանի որ նրա շաբաթական ժամերը կգերազանցեն շաբաթական 66 ժամը, ապա դուք պետք է այլ մատակարարող(ներ) գտնեք լրացուցիչ ժամերն աշխատելու համար:

**Միայն մեկ մատակարարող ունեցող ստացողների համար – ձեր մատակարարողին՝ իր առավելագույն շաբաթական ժամերից ավել ժամեր աշխատելու թույլտվություն տալը**

Ի լրումն ձեր մատակարարողին թույլատրելուն, որ նա աշխատի ձեր առավելագույն շաբաթական ժամերից ավել, դուք կարող եք նաև թույլ տալ ձեր մատակարարողին աշխատել իր առավելագույն շաբաթական ժամերից ավել, առանց վարչաշրջանի հավանության, եթե.

- Դուք չունեք ձեզ համար աշխատող մեկ այլ մատակարարող,
- Ձեր մատակարարողը չի աշխատում այլ ստացողների համար, և
- Ձեր մատակարարողը փոփոխում է իր շաբաթական աշխատանքային ցուցակը՝ աշխատելով ավելի քիչ ժամեր ձեզ համար հաջորդ շաբաթվա(ների) ընթացքում, որպեսզի նա չգերազանցի ձեր ամսական հաստատված ժամերը, և ձեզ համար ավել արտաժամյա ժամեր չաշխատի, քան սովորաբար կաներ մեկ ամսում:

**Ինչպես վարչաշրջանից խնդրել հաստատել շաբաթական ժամերի փոփոխությունը, երբ անհրաժեշտ է**

Դուք կարող եք խնդրել, որ վարչաշրջանը հավանություն տա ձեր առավելագույն շաբաթական ժամերի փոփոխությանը կամ այդ փոփոխության անհրաժեշտության պահին, կամ որքան հնարավոր է շուտ դրանից հետո: Դուք կարող եք մեկնազամյա խնդրանք ներկայացնել կամ կարող եք ապագա փոփոխություններ խնդրել մի կարիքի համար, որը գիտեք, որ ունենալու եք: Նոր օրենքն ասում է, որ վարչաշրջանը չպետք է անողջամտորեն խուսափի ձեր խնդրանքի հաստատումից: Դուք պետք է հավանության համար դիմեք վարչաշրջան, նախքան ժամանակացույց ուղարկելը, որպեսզի վարչաշրջանն ունենա ճիշտ տվյալներ՝ ձեր մատակարարողին ճիշտ աշխատավարձ վճարելու համար:

Վարչաշրջանը կդիտարկի ձեր խնդրանքն ու կորոշի, թե արդյոք առկա են բոլոր հետևյալ պայմանները փոփոխության ձեր հայցը սատարելու համար.

- Արդյո՞ք ձեր մատակարարողը պետք է (եր) աշխատի ավել ժամեր, քանի որ դուք ծառայությունների անսպասելի կարիք ունեք (ունեիք), որը չէիք ակնկալում:
- Արդյո՞ք ձեր կարիքն անհապաղ է (եր) և այն չի (չեր) կարող սպասել մինչև ձեր փոխարինող մատակարարողի ժամանելը:
- Արդյո՞ք ձեզ հարկավոր են (էին) ծառայությունները, քանի որ դուք կարծում էիք, որ ձեր առողջությունը և/կամ ապահովությունը վտանգի տակ էին:

Եթե փոփոխությունը համապատասխանում է այս բոլոր պայմաններին, ապա վարչաշրջանը կհաստատի այն: Հակառակ դեպքում վարչաշրջանը կմերժի խնդրանքը:

Եթե հնարավոր է, վարչաշրջանը կտեղեկացնի ձեզ իր որոշման մասին ձեր փոփոխության խնդրանքի վերաբերյալ և կմուտքագրի այն CMIPS ձեր գանգի պահին: Փոփոխություն խնդրելու հեռախոսագանգից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում վարչաշրջանը ծանուցում կուղարկի՝ ասելով, թե արդյոք փոփոխության ձեր խնդրանքը հաստատվել է, թե մերժվել է: Եթե խնդրանքը մերժվել է, ապա ծանուցումը կբացատրի ձեզ, թե ինչու է վարչաշրջանը մերժել այն, և մերժման հետևանքները:

Եթե դուք ամսական կրկնվող կարիք ունեք, որը պահանջում է ձեր շաբաթական ժամերի փոփոխություն, դուք կարող եք վարչաշրջանից շարունակական կրկնվող փոփոխություն խնդրել:

**Մատակարարողի խախտումներն աշխատաթափին շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումների գերազանցելու համար**

**Սկսած 2016 թ. մայիսի 1-ից`** եթե ձեր մատակարարողը ժամանակացույց է ներկայացնում՝ զեկուցելով աշխատանքային շաբաթվա կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները գերազանցող ժամեր, նա խախտում կստանա: Ամեն անգամ հետևյալից որևէ մեկն անելիս, նա խախտում կստանա՝

- Ձեր մատակարարողն աշխատում է 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ձեզ համար, երբ դուք վարչաշրջանից հավանություն չեք ստացել (երբ ձեզ համար հաստատվել է 40 ժամից քիչ մեկ աշխատանքային շաբաթում),
- Ձեր մատակարարողն աշխատում է ձեզ համար ավել ժամեր աշխատանքային շաբաթում, քան հաստատված է ձեզ համար, առանց վարչաշրջանից հավանության, ստեղծելով սովորականից ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում,
- Ձեր մատակարարողն աշխատում է մեկից ավելի ստացողների համար, ու նա աշխատում է ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, կամ
- Ձեր մատակարարողի ճամփորդության համար հայցված ժամանակը գերազանցում յոթ ժամ աշխատանքային շաբաթում:

Ձեր մատակարարողի ստացված յուրաքանչյուր խախտման համար լինելու են որոշակի հետևանքներ.

Առաջին խախտում	Ձեր մատակարարողը և դուք կստանաք խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:
Երկրորդ խախտում	Ձեր մատակարարողը և դուք կստանաք խախտման մասին ծանուցում, և ձեր մատակարարողը կարող է անցնել <u>մեկանգամյա ուսուցում</u> աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումների մասին: Նրանք, ովքեր որոշում են անցնել այս ուսուցումը, չեն ստանա երկրորդ խախտումը: Եթե ձեր մատակարարողը որոշի չանցնել ուսուցումը ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում, նա կստանա երկրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:
Երրորդ խախտում	Ձեր մատակարարողը և դուք կստանաք երրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: Ձեր մատակարարողը <u>կհեռացվի</u> IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից երեք ամսով:
Չորրորդ խախտում	Ձեր մատակարարողը և դուք կստանաք չորրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: Ձեր մատակարարողը <u>կազատվի</u> IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից մեկ տարով:

Եթե մեկ ամսվա ընթացքում ձեր մատակարարողը ստանա մեկ խախտումից ավել, դա կհաշվարկվի որպես միայն մեկ խախտում:

Ցանկացած տեսակի խախտում ստանալիս ձեր մատակարարողն ունի տաս օրացուցային օր խախտման ծանուցման ամսաթվից, որպեսզի վարչաշրջանից խնդրի վերանայել խախտումը: Երբ վարչաշրջանը ստանում է վերանայման խնդրանքն, այն ունի տաս օրացուցային օր խախտումը վերանայելու և հետազոտելու ու ձեր մատակարարողին վերանայման արդյունքների մասին ծանուցում ուղարկելու համար:

Երրորդ ու չորրորդ խախտումների համար, եթե վարչաշրջանը չի չեղարկում խախտումը, ձեր մատակարարողը կարող է խախտման վերանայում խնդրել Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժանմունքի Չափահասների ծրագրերի բաժնի Բողոքարկման միավորից տաս օրացուցային օրվա ընթացքում խախտման ծանուցման ամսաթվից: Վարչաշրջանի ծանուցումը կբացատրի՝ ինչպես կարող է ձեր մատակարարողը նահանգային վերանայում խնդրել:

Երբ ձեր մատակարարողը խախտում է ստանում, այդ խախտումը մնում է նրա արձանագրություններում: Սակայն, եթե մեկ տարուց հետո նա այլ խախտումներ չի ստանում, ապա նրա ստացված խախտումների քանակը կնվազեցվի մեկով: Եթե նա չի ստանում լրացուցիչ խախտումներ, ապա նրա վերջին խախտումից հետո յուրաքանչյուր տարի նրա խախտումների քանակը կնվազեցվի մեկով:

Եթե ձեր մատակարարողը ստանա չորրորդ խախտումը և ազատվի մատակարարողի աշխատանքից մեկ տարով, ապա տարվա ավարտից հետո, երբ նա կրկին դիմի IHSS մատակարարող լինելու համար, նրա խախտումների քանակը կգրոյացվի:

Եթե ձեր մատակարարողն ազատվում է աշխատանքից չորրորդ խախտումը ստանալու համար, ապա մեկ տարվա ազատման ժամկետը լրանալուց հետո նա պետք է կրկին լրացնի մատակարարողի անդամագրման բոլոր պահանջները, նախքան կրկին կարող է IHSS մատակարարող դառնալ, ներառյալ՝ կենսագրական տվյալների ստուգում, մատակարարողի կողմնորոշում ու այլ պահանջվող ձևերի լրացում:

**Եթե դուք չեք հասկանում այս ծանուցման տեղեկությունները, կամ եթե հարցեր ունեք դրա վերաբերյալ, ապա զանգահարեք վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ վարչաշրջանի IHSS Ջանրային իշխանություն:**